

րին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ սուրբ Գէորգայ զօրաւա-
րին. եւ ի թվիս մեծ հայոց ՉՀԹ (1330) :

յայս դառնացեալ ժամանակիս ,
նեղութիւնս ազգի ազգիս ,
որ պահանջեն զգին հաւատիս ,
զոլով անտէր ազգ (... մաշած ...) կաթուղիկոս հայոց
տէր Յակոբ եւ թագաւոր Լեւոն , նստեալ ի դահն Կիլիկիացոց :
Իսկ տիրէր ամենայն ազգին նետողաց եւ քաղուժ ազգաց Ղան
Բուսայիտ , ունելով ի ծովէն Պոնտոսի մինչեւ ի ծովն Կասպից ,
եւ մինչեւ ի դեան Ջահուն :

«Արդ ազաչեմ զամենեան , որք հանդիպիք աստուածա-
յին աւետեացս , արժանի յիշման արասլիք զնկար գրիչս թորոս
եւ զպապն իմ զՍիար եւ զհայրն իմ Սարգիս քահանայ , եւ զմայ-
րըն իմ Մարիամ , ի Տարօնոյ քաղաքէ Մշոյ , առաջի փրկագործ
մարմնոյ եւ արեան որդւոյն Աստուծոյ» : (Պաղբակեանք կամ
Պոռչեանք , Բ. Մաս էջ 175-176) :

Դժբաղդաբար այս ձեռագրին արուեստին մասին ալ բան մը
չէ ըսուած , եւ ո՞վ գիտէ ինչ եղած է ձեռագիրը այժմ :

Վենետիկի մեր վանքին թիւ 12 Աստուածաշունչը գրուած է
թուղթի վրայ , բոլորգիր Ներսէս վարդապետի համար «որդի
Վահրամա , յաշխարհէն Տարուսու , ի գաւառէն Սասնու , ի վա-
նացն Ղաղարու , ի դեղջէն որ կոչի Կոս» : Գրչութիւնը կատա-
րուած Յոհաննէս Մշեցոյ եւ Եփրեմ ու Դաւիթ կուսակրօն քա-
հանայից շնորհիւ : Գրչութեան վայրը թէեւ քիչ մը անորոշ հա-
ւանաբար ըլլայ Գլաձորու վանքը : Ստացողը Ներսէս վարդա-
պետ Սասնեցի կը յիշուի նաեւ ծաղկողի յիշատակարանին մէջ :
էջ 349ր «Վարդապետն Ներսէս՝ յիշեա յաղօթս զթորոս ծաղ-
կող , եւ զպապն իմ Սիար եւ զհայրն իմ Սարգիս քահանայ , եւ
զմայրն իմ Մարիամ ի քաղաքէն Մշոյ» :

Ձեռագիրս որ գրուած է 1332ին ծաղկեալ է թորոս Տարօնե-
ցիէ : Խիտ հաւանաբար երբ թորոս մօտաւորապէս ութսու-
նամեայ էր :

Հ. Սարգիսեան սապէս կը նկարագրէ ձեռագրին արուեստը :
«ԶԱՐԴԱԳԻՐԻ ԿՐԻՍ ԿՈՍԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՍԱԿԱԼԱ-
ԹԻՒ ԵՆ , ի բաց առեալ Սաղմոսն եւ Յասյի , որոնց սկզբնաւո-
րութենէն դուրս՝ ամէն գլուխք եւ ստորաբաժանմունք իսկ
զարդագրերով կսկսին , որոնք միագոյն են՝ այն է աղօտ կար-
միր կամ բաց մանիչակագոյն : Իսկ Նոր Կտակարանին մէջ խիտ
չատ են , մարդագիր , թուչնագիր եւ դաղանագիր եւլն : ԽՈՐԱՆԻՔ
6 հատ են (տես թղ. 356ա-358ր) . ոմանք երկու , ոմանք ե-